ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «10» 06 2026թ N 1696 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 613-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1742-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ կետի 6-րդ ենթակետը, և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

Հրամայում եմ

1. «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի մարտի 9-ի ««Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների» ծրագրի շրջանակում փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ պայմանագրի, մասնակցության դիմումի և հաշվետվության օրինակելի ձևերը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N 1539-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 613-Լ հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով

հաստատված N1 հավելվածի ամբողջ տեքստում» ««Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի» բառերը փոխարինել ««Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի» բառերով:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի աշխատանքները համակարգող Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալին:

4. Լրատվության և հասարակության հետ կապերի վարչությանը՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանը հրապարակել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ